ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2021 թվականի N 8

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 12-ի N 1776-Ա հրամանը՝ որոշում եմ.

1. Հաստատել 2021 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանի 1-ին հավելվածով ներկայացված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացնել, որը պարունակում է տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին:

6. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքները հրապարակել մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում:

8. 2021 թվականի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագիրը եռօրյա ժամկետում տեղադրել մարզպետարանի պաշտոնական կայքում:

9. Եռամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910013

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ